

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՅՆ-
ՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱ-
ԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 սեպտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ.Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի,
Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100
հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի մայիսի
11-ին ստորագրված՝ Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի
կանոնադրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի
Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը
որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ ՀՀ
սահմանադրական դատարան 11.06.2008թ. մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապե-
տության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի
նախարար Ա. Գրիգորյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով

համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի կանոնադրությունն ստորագրվել է 2007 թվականի մայիսի 11-ին:

Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագիրը կնքվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Res(2007)8 բանաձևի համաձայն՝ սպորտային քաղաքականության ռազմավարություն մշակելու և համապատասխան չափանիշներ սահմանելու, «բարոյական սպորտի» ապահով գործելակերպը հնարավորինս մատչելի դարձնելու համար մասնակից պետություններում և նրանց միջև սպորտային քաղաքականությունների և չափանիշների ներդաշնակեցումը խրախուսելու և ապահովելու, միջազգային սպորտում արդիական խնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ քաղաքականության վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու, սպորտի՝ որպես առողջ ապրելակերպը խթանող միջոցի, զարգացմանը նպաստելու նպատակով:

Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագիրը վերահսկողություն է իրականացնում համաձայնագրի մասնակից պետություններում Եվրոպական սպորտային խարտիայի (Հանձնարարական թիվ R (92) 13 REV) և Սպորտային էթիկայի օրենսգրքի (Հանձնարարական թիվ R (92) 14 REV) կիրառման նկատմամբ, քայլեր է ձեռնարկում «Սպորտը բոլորի համար» ծրագրի շրջանակներում կարողությունների զարգացման նպատակով, իրականացնում է սպորտային համագործակցության միջկառավարական միջոցառումներ, Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի անդամների և Եվրոպական մշակութային կոնվենցիայի մասնակից պետությունների համար նախապատրաստում և կազմակերպում է նախարարական մակարդակով հանդիպումներ:

Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի կանոնադրությամբ նախատեսվում է անհրաժեշտության դեպքում վերոշարադրյալ նպատակների

իրականացման համար համաձայնագրի համագործակցությունը «Սպորտային միջոցառումների և հատկապես ֆուտբոլային խաղերի ժամանակ հանդիսատեսների անվայել վարքի և բռնության դրսևորումների մասին» եվրոպական կոնվենցիայի մշտական կոմիտեի (T-RV), Հակադոպինգային կոնվենցիայի մոնիտորինգի խմբի (T-DO) և Հակադոպինգային համաշխարհային գործակալության համապատասխանեցման եվրոպական համաժողովի ժամանակավոր (ad hoc) կոմիտեի (CAHAMA) հետ, Եվրոպական համայնքի, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային և ազգային մարզական ոչ կառավարական կազմակերպությունների և հակադոպինգային կառույցների հետ:

Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի մարմիններն են Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի Ղեկավար խորհուրդը և Կանոնադրական խորհուրդը: Ղեկավար խորհուրդը կազմվում է Ընդլայնված մասնակի համաձայնագրի կողմ հանդիսացող յուրաքանչյուր անդամի կառավարության կողմից նշանակված մեկական ներկայացուցչից, և պատասխանատու է Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրում սահմանված խնդիրների ընդհանուր իրականացման համար: Կանոնադրական խորհուրդը, որը կազմվում է Եվրոպայի խորհրդի Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի մասնակից անդամ պետությունների Նախարարների կոմիտեի ներկայացուցիչներից և համաձայնագրի մասնակից անդամ չհանդիսացող պետությունների կողմից հատուկ այդ նպատակով նշանակված ներկայացուցիչներից, սահմանում է Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի ամենամյա պարտադիր անդամավճարների ընդհանուր գումարը և վճարումների չափը, ըստ որի՝ ընդհանուր գումարը բաշխվում է մասնակից պետությունների միջև:

Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես.

- նշանակել մեկ ներկայացուցիչ Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի Ղեկավար խորհրդում,

- կատարել ամենամյա վճարումներ, որոնցով ձևավորվում է համաձայնագրի բյուջեն:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2007 թվականի մայիսի 11-ին ստորագրված՝ Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի կանոնադրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12 սեպտեմբերի 2008 թվականի

ՄԴՈ-764